Մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի «Արարատ քաղաքի Ժորես Մկրտչյանի անվան թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի << Ինֆորմատիկա >> առարկայի ուսուցչի թափուր տեղի համար

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ ‹‹Հանրակրթության մասին›› ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (Ձև 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝3 x 4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն թվականի դեկտեմբերի 7-ից մինչև դեկտեմբերի 14-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10^{00}-ից մինչև 15^{00}, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա **2023թ-ի դեկտեմբերի 19–ին՝ ժամը 14^{00}-ին**, ՀՀ Արարատի մարզի Արարատ քաղաքի Ժորես Մկրտչյանի անվան № 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում: Հասցեն՝ ՀՀ Արարատի մարզ, ք. Արարատ, Շահումյան 62

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0234)-4-23-82, 093-33-80-58 հեռախոսահամարներով: